գառանցս, եւ աղաչեմք զի աւրհնեսցես զսոսա ի պարարումն և ի վայելս մարմնոց՝ բանիւ բերանոց մեր, որով կոչեմք զքո սբ. անունդ, եւ դրոշմեմք զնշան սբ. խաչիս։ Եւ որք ընդունիմք զսա ի քո շնորհացդ, յամենայն ժամ կալցուք զքեզ կենարակուր հոգոց յանձինս մեր, շնորհաւք Տն. մերոյ Յի. Քի. ընդ որում քեզ հաւր և հոգոյդ սրբոյ փառ» են։

Ուրիշ օրինակի մը մէջ՝ 1436ին, գրուած եմ տարբեր օրհնութիւն մը, որ Վարդավառին ալ յատուկ է, ըստ որում գառին ճաշակումը տեսանք նաեւ նոյն օրը (աստ, 372)։ Իւր վերնագիրն է՝ «Կանոն գառին Զատկի եւ Վարդավառի»։ Եւ բովանդակութիւնն է. «Տէր տաւնից եւ Աստուած ամենայն ուխտից, որ յամենայն ժամ լի առնես բարութեամբ զերկիւղածս քո, ընկալ զգառն պատարագիս զոր մատուցանեմք քեզ։ Աճեցոյ եւ բազմացոյ զտուն ծառայից քոց, որպէս աճեցուցեր եւ բազմացուցեր զտունն՝ Աբրահամու, Իսահակայն եւ զՅակոբայն։ Ի հաճոյս քեզ եղիցի պատարագս զայս որպէս զՀաբելին, եւ յամենայն ժամ քեզ պատարագս մատուցցուք՝ բարեբարիդ եւ խնամողիդ։ Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն» են։